ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» 08 2020թ. № 216

ԱՇՈՏ ՀՐԱՉԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 34-րդ կետով և 35-րդ կետի «ա» ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշման, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2020 թվականի հուլիսի 28-ի թիվ 28072020-06-0007 վկայականը և Աշոտ Հրաչիկի Սիմոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «քաղաք Սպիտակ, Շահումյան փողոց, թիվ 50/1» հասցեում գտնվող 06-006-0505-0012 կադաստրային ծածկագրով 0,00601 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքով՝ 31 733 ՀՀ դրամ, օրինական ճանաչված 6,45 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը 45 124 ՀՀ դրամ արժեքով՝ որպես կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Աշոտ Հրաչիկի Սիմոնյանին (ծնված 12.06.1973թ.):
2. Աշոտ Հրաչիկի Սիմոնյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:
3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետին և աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:
4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 13
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» օգոստոսի 2020թ. № 217

«ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍՊԸ-ի 2020 թվականի օգոստոսի 11-ի հայտը՝ *որոշում եմ.*

1. «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06802127) տալ «ք. Սպիտակ, Ալ. Մանուկյան 1» հասցեում գտնվող հեղուկ վառելիքի լցման կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 13
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«13» օգոստոսի 2020թ. № 218

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՂՈՒՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Աղունիկ Մարտիրոսյանի 2020 թվականի օգոստոսի 10-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Աղունիկ Մարտիրոսյանին (ՀՎՀՀ 66003441) տալ «ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 1» հասցեում գտնվող սեղմված բնական գազի լցավորման կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 13
ք. Սպիտակ